

ինչուան կը պատմեն ալ որ հարաւային
Ռմբիկոյ մէջ Հնդիկները մէկ լեռնէն
մէկալ լեռը օղային հաղորդակցութիւն
ներ ըրած են՝ քանի որ դեռ Խւրոպա-
ցիք առկախեալ կամուրջ շինելու ա-
րուեստը չէին գիտեր : Ռմբիկա այս
տեսակ հաղորդակցութիւնները փը.
սիաթներով կ'ընեն , զորոնք ծառերու
կեղեներէ շինած երկայն չուաններով
կ'ամրացնեն : Որ և իցէ պզտի քամի
մ'ալ զասոնք կը շարժէ , որոնք իրենց
մեծ երկայնութեամբը այնպիսի ծռու-
թիւն մը կ'առնեն , որ մարդուս անհա-
ւատալի կ'երևայ թէ կարենայ վրայէն
անցնուիլ : Ի վերայ այսր ամենայնի
Հնդիկը զարմանալի երագութեամբ
մը աս կամուրջներուն վրայէն կ'անց-
նին , թէպէտ և ամէն մէկ քայլ առած
ատենին այնպէս կը ճօծի կամուրջը ,
որ մինչեւ երկու ծայրերէն ալ կ'իմա-
ցուի : Կ ատ գժուարին բան է որ եւ-
րոպացի մը սիրտ ընէ այնպիսի ան-
կայուն յենարանի մը իր կեանքը հաւ-
տալու . որովհետեւ ոչ չուան կայ , ոչ
բռնելու տեղ մը , որուն սխալ քայլ մը
առած ատեն կարենայ մարդ ապաւի-
նիլ . և թէ որ մեծ վարժութիւն մը
չունենաս , այն ահագին խորութենէն՝
որուն վրայ որ կախուած է կամուրջը ,
գլուխդ պտըտելն ու գահավիժիլդ մէկ
կ'ըլայ : — Իրաւ որ ասոնք են արժանի
Ստանայի համուրջ ըսուելու , որոնց առ-
ջև վտանգի կողմանէ Օուիցերիիննե-
րը բան չեն :

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Չինացոց փիլիսոփայուրեան վրայ :

Չինացոց փիլիսոփայութեան ծա-
գումը , ինչպէս նաև ուրիշ ամէն արևե-
լեան հին ազգացը՝ իրենց աստուածա-
բանութեան հետ կապուած է . ուստի
նախ իրենց Քինէ ըսուած գրոց մէջ
կ'երևայ իրենց փիլիսոփայութիւնը , բայց
քան զան աւելի Ի-Քինէ կամ Փոփուա-
նեանց Գիրտ ըսուածին մէջ կը տեսնուի ,

որն որ գլխաւորաթար բնազանցութեան ,
բնաբանութեան , և բարոյականի վը-
րայ կը խօսի : Ռյու գրքիս ստոյգ հեղի-
նակը զգիացուիր , բայց իրենք աւան-
գութեամբ կ'ըսեն թէ Փոհի անուամբ
առաջին թագաւորն է , Վիշի թուա-
կանէն 3,000 տարի առաջ . բայց յա-
ջորդները հետ զչետէ աւելի ընդար-
ձակեցին և կոկեցին , և վերջապէս իոն
փուկիոս իրենց մեծ իմաստակը ացքէ
անցուց զափիկայ , որուն օրինակն է հի-
մակուան գործածուածը : Համառօտիւ
մը նշանենք այս Ի-Քինէ գլքին բնա-
զանցական վարդապէտութիւնը :

Ի,ախ ամենայն իրաց մէկ գերագոյն
սկիզբ մը կը դնէ Դաի-՛հի կամ Ամենալը
անուամբ , որն որ ետքը ետքը Դաս կո-
չուեցաւ շինացի փիլիսոփաներէն , այս-
ինքն է Բան , որն որ երկու ձեւերով
նշանակեցին , զորոնք Ենէ և Են կը կո-
չէին իրենք . առաջինը կատարելութեց
յատկութիւնները կը յայտնէր , իսկ եր-
կրորդը՝ անկատարութեանց : Ռյու
ալ զարձեալ չորս չորս ձեւեր հնարեցին ,
որոնք երկու այլ և այլ վիճակներ կը ցու-
ցնեն , ուժոյ և տկարութեան : Ռյու
չորս ձեւերն ալ բոլոր երկնային և եր-
կրային բաները կը ներկայացընեն , ութը
եռատառերով՝ , որոնցով համառօտիւ
ամէն բաներուն բովանդակիլը կ'ուզեն
իմացընել : Ռյու երկու գոյացութիւննե-
րէն զատ , կան Քայլ-Շին կամ պարզ
Շին անուամբ ոգիններ , որոնք նախնա-
կան Բանէն այսինքն Դասէն առաջ կու-
գան : Ուարդս երկու հոգի ունի , մէկը
թանձր Բի ըսուածը , յորում է զգա-
լու կարողութիւնը , իսկ միւսը նուրբ
Են , յորում է իմացականութիւնը : Խըր
մարդս վախճանի , առաջինը այսինքն

1 Այս Եռատառ (Trigramme) ըսածները տե-
սակ մը խորհրդատառեր են , երեք երեք տողով ,
և իրաքանչւր առը երկերկու գծով ձեւացած .
մէկը ամբով , մէկալը մէջտեղէն երկու բաժնուած .
այս գծերուն այլ և այլ կերպ ետև առաջ փոփո-
խութիւն տալով ութը եռատառ ձեւացուցեր եր
Փոհի : Ասոնցմով շինած էր և թուաբանութեան
երկակաց համագրութեան (Système Binaire)
ծածկագրութիւնը , որուն վայ առանձին յո-
դուածով տեղեկութիւն կու տանք ընթեցողաց :

Բէ 'ի հող կը դառնայ , ուսկից որ ելած էր , իսկ միւսը որ էր Եջ՝ երկինք կը թռչի ուսկից որ իջած էր և Շխ կը ձեանայ , այսինքն ոգի մը : | Ա-քինկի բարոյականը հիմնած է այս սկզբանս վրայ՝ որ մարդ պէտք է նմանի երկնային բանին , որն որ փառաւոր և լուսաւոր ըլլարով մինչև յերկիր կ'իջնայ , որպէս զի մարդիկ անով կարենան առ նա վերանալ : | Կ Ա-քինկի վարդապետութիւններն կը հակընամք որ Ծինացիք սկըզբանէ հետէ ունեցեր են գերազոյն էակի մը գաղափար . նոյնպէս հոգւոյ և անոր անմահութեանը , և բարեաց և չարեաց հատուցման : | Հւ թէպէտ այս հիմնական ծշմարտութիւններս ձանցան , բայց չելան իրենց մէջ երեելի փիլիսոփայք , անոր համար ալ բնազանցութեան մէջ չզարդացան . ինչուան Վրիստոսի թուականէն վեց դար առաջ , երբ բողորովին զեղծմունքներով մարդկութենէ ինկեր էին , ելան երկու փիլիսոփայք | աօ-չու և Վոնկ-ֆու-ցէ (Կանկո-էիս) անուամբ , որոնք ժողովը դեան բարուց ապականութեան դէմը առնելուզելով՝ այլ և այլ ձամբով օրէնքներ զրին . և դպրոցներ կանգնելով շատ աշակերտներ հանեցին . բայց | աօ-չուին ազգեցութիւն Վոնսփուկիոսի շափ չեղաւ , որովհետև ինքը բնազանցական տեսութեանց աւելի ուշ կը դնէր . իսկ Լոնսփուկիոս բարոյական և քաղաքական փիլիսոփայութեան վարժապետութիւն կ'ընէր , որոնք ժողովուրդը դիւրաւ հասկընալով , աւելի ծաւալեցաւ իր վարդապետութիւնը : | Այս երկու երեելի փիլիսոփայից վարդապետութիւները դնենք հոս համառօտիւ :

| աօ-չու Ծինաց հուքէնք գաւառը ծնած է Վրիստոսէ 604 տարի առաջ , և Վաօ-դէս-քինկ անուամբ , և կամ որ նոյն է , Վիրք գերազոյն բանի և ծշմարտուեց ըստած դիրք մը շինեց ութսուն և մի գլուխ բաժնած . որուն մէջ այս հետեւալ վարդապետութիւնս կը բովանդակէ : — Վրաց առաջին պատճառն է , գերազոյն , յաւիտենական , բացաձակ , մտաւոր , Դաս ըստած , այսինքն է

բան , որ է անսահման և յինքենէ : Դաօն անմարմին է , բայց արտաքսապէս մարմնաւոր առարկայից ձեռքովը կ'իմացուի : Ի՞անէն առաջ եկաւ մէկը , մէկէն ալ երկուքը , երկուքէն երեքը , իսկ երեքէն ամենայն ինչ : | Ո՞էկ ընդհանուր հոգի մը կ'ենթադրէ , ուսկից որ ուրիշ մասնականները առաջ կու գան . և բարի արանց հոգիքը այս կեանքէս ելլալէն վերջը՝ դարձեալ առ նա պիտի դառնան . և այսպէս երկու սկիզբ կը դնէ , իմացականութիւն և նիւթ : | Հւ ըստ Ա-քինկի վարդապետութեանը հոգին երկու կը բաժնէ , մէկը թանձր , իսկ մէկալը նուրբ : Ի՞այց մասնաւորապէս հետաքննութեան արժանին այս է՝ որ կ'երեւայ թէ ամենասուրբ Այրորդութեն համար ըստած ըլլայ այս խօսքս . “ | Կնիկայ որուն կընայիք և չէք տեսնար՝ Ի կը կոչուի . իսկ այն որուն մտիկ կ'ընէք և չէք լսեր , չէ կը կոչուի . իսկ զոր կը մինտուեք և չէք գտնար՝ չէի կը կոչուի . երեք էակներ են՝ անհասանելիք մտաց , որոնք իրարու հետ միացեալ մէկ էակ մը կը կացունեն , . . . ։ Հայտնի կը տեսնանք որ այս բառիս մէջ եբրայական ՈՒՂ (Եհօլահ) բառին հետ խիստ շատ նմանութիւն կայ . և իրեն Վաս ըստածը ըստ նիւթական կազմութեանն ալ նայելով՝ յունաց (Թէօս) , լատին (Պես) և իրմէ ելած նոր լեզուաց բառերուն նման է , որ | Կ աօ-չուին վարդապետութիւնը իրեն շատ մասնցը մէջ նման է յունական վարդապետութեան և մասնաւորապէս Պիւթագորասի և Պղատոնի վարդապետութեանցը . և ինքը Պղատոնէն առաջ Պիւթագորասի և Պիւթագորասի ժամանակները կը փայէլը Ծինաց մէջ : Ի՞այց թէ արգեաք այս նմանութիւնը ուսկից առաջ կու գայ , հաւանական կ'երեւայ որ այս վարդապետութիւնները մէկ հասրակաց հին աղբիւրէ մը առած ըլլան : | Այս է ահաւասիկ | աօ-չուին վարդապետութեան ծուծը :

Իսկ Լոնսփուկիոս Սիէնկ-թունկ ըստած դաւառը ծնած է Վրիստոսէն 551 տարի առաջ և | աօ-չուին ծննդե-

Նէն 53. տարի վերջը . իր ազգին Դինկը ըսուած կրօնական գրքերը կադրի դրաւ . բայ ասկէց ուրիշ քանի մը բարոյական և քաղաքական գրքերու ալ հեղինակ կրնայ ըսուիլ , զորոնք թէպէտև և իր աշակերտները հաւաքեր և զրի անցուցեր են , բայց բոլոր իր վարդապետութիւն ներն են , զորոնք դպրոցին մէջ անոնց կը սովորեցրներ : Կրնփուկիոսի բարոյականին հիմունքն է , պարտք առ կատարելութիւն . և այս պարտքը երեք գաս կը բաժնէ . Ա . Պ անալ որչափ որ կարելի է մարդուս մատաց բարոյական կարողութիւնը մաքրել , որն որ իր բողոքնելու ժամանակը թէ որ անխնամ թողուի՝ կրքերէ կը խոպանանայ : Բ . Ուստարել ժողովուրդը , հազրդելով անոր այն ամենայն բարոյական ճշմարտութիւնները որ մէկ մշակեալ միտք մը կրնայ պայծառ ճանչնապ , ու կրթելով քաղաքականացրնել : Ա ասն զի հասարակ ժողովուրդը թշուառութեանց և կրից մէջ թաթխուած ըլլալով , ինքիրմէ չկրնար այն ճշմարտութիւնները գտնալ : Գ . Գրեագոյն բարւոյն հասցընել զանիկայ , այսինքն է որչափ որ կարելի է կատարելագործել մարդկային բնութիւնը , որպէս զի իր յատուկ վերջի վախճանին կարենայ հասնիլ : Եւ այս սկըզբանի մը շինած է , որուն մէջ ամէն աստիճանի մարդկանց պարտքը կը նշանէ : Վ սոնցմէ ոմանք խիստ ընտիր են , ինչպէս որդւոց առ ծնողս ունեցած պարտքը , գլխաւորաց յարգութեան վրայ զրածը : Վ սոնցմէ Վ թիւնկի մէջ կանշատ խելացի բարոյական առաձներ ալ :

Բ այց Վ ոնուտ և ուրիշ մատենագիրքը կը հաստատեն՝ որ ինքը Վ սուածոյ գոյութիւնը ճանցած ըլլայ : Ա ասն զի Կ ոնփուկիոս իրեն բնաբանութեանը մէջ կը պահանջ որ ոչնորութիւնը ունեցած պարտքը մը շինած է , որուն մէջ պակսութիւն ալ կայ մէջը , որն որ այն լայնածաւալ տէրութեանը , որուն ինքն օրէնսդիր է՝ մեծամեծ դժբաղդութեանց պատճառ եգաւ . որովհետև ինքը բոլորովին կը շփոթէ քաղաքական ընկերութիւնը ընտանեկանին հետ , յորում հայրը ամենուն կը հրանիսէ և ամենքը իր կամքէն դուրս չեն կրնար ելլալ : Եւ այս շփոթութիւնը որ Վ սոնցւոց սկզբունք եղած է , կ'արգելու բոլորովին իրենց որ և իցէ բանաւոր և ազատ մնածութիւր գործածելը . որովհետև հարկազրեալ են պարզ հաստակութիւն ընել իրենց մեծերուն , և իրենց կողմանէ ամենեւին խելք ըրանեցընել : Վ յս է ահա Վ սոնցւոց գանգազութեան պատճառը , որ այնչափ զարէ ի վեր ինչուան այսօր չեն զարգացած :

Լ աօ-չուին և Կ ոնփուկիոսի դպրոցները իրենց մահուանէ վերջն ալ առանց իրարու հետ շփոթելու առաջ կ'եր-

ծայելու , նիւթին հետ մէկ կը զնէ , և ասանեկով բոլոր Վ սուածոյ ստորագելիքը , իր յաւիտենական , անվախճան , անբաժանելի , անսահման , ամենակարող և յամենայնի ըլլալը՝ նիւթոյն սկզբանը կու տայ : Խակ հոգւոյ վրայ նոյնպէս ըստ Վ թիւնկի վարդապետութեանը ինքն ալ երկու կը բաժնէ : Եր վիլխովիայութե մէջ դարձեալ մտէ բառը ամենեւին ըլլայ , ինչպէս նաև բոլոր Վ սոնցիք ալ չեն գործածեր , վասն զի իրենք կ'ըսեն թէ մարդու չվախճանիր , այլ իր ընտանեաց քովը կ'երթայ :

Վ այլը իրեն վարդապետութեանցը մէկ մասնաւորութիւնն ալ աս է , որ ընտանեաց օրէնքը՝ հասարակաց օրէնք կը սեպէ : Ուստի ինչպէս որ որդին իր հօրը իշխանութեանը տակն է և անոր հըրամանէն դուրս չկրնար ելլալ , այսպէս բոլոր հաստակները իրենց իշխանին . որով զամենքը ծանր հպատակութեան տակ կը սեպէ : Ուստի թէպէտ շատ կողմանէ իր այս վարդապետութիւնը գեղեցիկ է , բայց խիստ մեծ պակսութիւն ալ կայ մէջը , որն որ այն լայնածաւալ տէրութեանը , որուն ինքն օրէնսդիր է՝ մեծամեծ դժբաղդութեանց պատճառ եգաւ . որովհետև ինքը բոլորովին կը շփոթէ քաղաքական ընկերութիւնը ընտանեկանին հետ , յորում հայրը ամենուն կը հրանիսէ և ամենքը իր կամքէն դուրս չեն կրնար ելլալ : Եւ այս շփոթութիւնը որ Վ սոնցւոց սկզբունք եղած է , կ'արգելու բոլորովին իրենց որ և իցէ բանաւոր և ազատ մնածութիւր գործածելը . որովհետև հարկազրեալ են պարզ հաստակութիւն ընել իրենց մեծերուն , և իրենց կողմանէ ամենեւին խելք ըրանեցընել : Վ յս է ահա Վ սոնցւոց գանգազութեան պատճառը , որ այնչափ զարէ ի վեր ինչուան այսօր չեն զարգացած :

Լ աօ-չուին և Կ ոնփուկիոսի դպրոցները իրենց մահուանէ վերջն ալ առանց իրարու հետ շփոթելու առաջ կ'եր-

1 Ա յս վիլխովիայիս վարքը և քանի մը առած ները կրնան ընթերցողք բազմավէպիս Զ . տարոյն մէջ գտնալ :

թային , բայց երկրորդինը աւելի կերպով մը զարգացաւ և ծաւալեցաւ ինչպէս որ ըսինք , թէ իր վարդապէտութեանը բարոյական և քաղաքական ըլլալուն և թէ մեծանուն վարժապէտներ իրեն յաջորդ ունենալուն պատճառաւը , որոնց մէջ երեւելի և հնագոյնները հօս մէյ մը յիշատակելը պատշաճ է : — ‘ Ա, ախ Շինկ-չի 505-ին ծնած՝ Լոնփուկիոսի սիրելի և յառաջազէմ աշակերտներէն մէկն էր , որն որ անոր վարդապէտութիւնը գիր անցուց : ’ ոյնպէս Շի-չի լոնփուկիոսի եղբօրորդին 515-ին ծնած , արժանաւոր յաջորդ եղաւ իր հօրեղբօրը և ինքն ալ նոյնպէս անոր անգիր վարդապէտութիւնները շարադրեց :

Բայց յետ լոնփուկիոսի Շինաց ամենէն հռչակաւոր բարոյախոս փիլիսոփայն է Ո՛հնկ-չու (Ո՛ենչիոյ) , որն որ Ըու փոքրիկ թագաւորութեան , Շինդունկ գաւառը ծնած էր չորրորդ դարուն սկիզբը յառաջ քան զ՞ի բիստոս՝ որ էր աշակերտ Շի-չիին . և ինքը այն ատեններ կը ծաղկէր Շինի մէջ , երբ Յունաստան Ոոկրատ , Պղատոն , Վիւսենոփոն և Վարհատոտէլ : Ինքն ալ նոր դպրոցներ հաստատեց և կը ջանար որ բոլոր Շիները միայն իր վարդապէտուիր ընդունին . կը սովորեցընէր ժողովրդեան նախ աստուածային իրաւունքները և ետքը թագաւորաց իրաւունք . նոյնպէս թագաւորաց ալ կը սովորեցընէր որ շատ չժանրանան ժողովրդեան վրայ և իրենց անսահման իշխանութեանը սանձ դընեն . և թէպէտ ինքն ալ վերի ըսած հպատակութիւննիս կը պահանջէր ամենէն , բայց քիչ մը աւելի բարեխառնելով՝ բոնաւոր և ինքնահաձոյ կամաց ալ օրէնքներ դրաւ : Կր գրուածքն է իրենց Վինկ կրօնական գրոց չորրորդ հատորը , և դարձեալ լոնփուկիոսի վարդապէտութիւնները աւելի պերճ ոճի վերածեց :

Վոնք են ահաւասիկ իրենց ամենէն երեւելի իմաստասերները . բայց թէ որ ուզենանք ընդհանուր աչքով մը Շինաց քաղաքական ընթացքը և իրենց բնաւորութիւնը քննել , իմանալու համար

թէ ինչ աստիճանի արդեօք ծաղկած էր փիլիսոփայութիւնը այն ազգին մէջ . կը գտնանք որ ’ի բնութենէ վեր ’ի վերոյ քննող են . և բան մը զիտելու , զննելու ամենակին չեն սովորած , որով անհնար է որ փիլիսոփայութիւն ունեցած ըլլան , որն որ ընդարձակ և խորին հանձար կ’ուզէ . ևս առաւել որ Լոնփուկիոսին սրբնանք ալ կ’արգիլէր իրենց խելք բանեցնելը : Այս տեսնանք ևս որ քիչ ատենուան մէջ ելան երկու դաս դպրոցներ բազմաթիւ աշակերտներով . ու դարձեալ չկրցաւ ազգին փիլիսոփայութիւնը զարգանալ : Այս թէ որ քննենք իրենց պատմութիւնը որ Լաոչուի և լոնփուկիոսի ժամանակները ինչ աստիճանի ապականութեան մէջ թաթիստած էին , մէկէն իրենց անփիլիսոփայ միտք ունենալը յայտնի կ’երեայ , և թէ միայն Լաոչուի և լոնփուկիոսի վարդապէտութիւնները զիրենք քիչ մը սանձեցին :

Լոկէց ալ յայտնի կ’երեայ դարձեալ որ փիլիսոփայութիւնը այս ժողովրդեանս բնաւորութեանը այնչափ յարմար չէ . վասն զի այն ազգեցութիւնը չըրին՝ ինչ որ պէտք էին ընել ժողովրդեան քաղաքական կենացը վրայ այս երկու փիլիսոփայից բնազմանցական և գործնական վարդապէտութիւնները : Այս իրենց աշակերտաց մէջէն և ոչ մէկը ելաւ որ իր մեծ հանձարովը անոնց ոճը գերազոյն աստիճանի բարձրացընելով՝ հայեցողական ոճի հասցընէ , ինչպէս որ կրցաւ Յունաստան Ոոկրատայ աշակերտներէն շատ այնպիսիններ հանել , և նախ անմիջապէս Պղատոնէն սկսեալ : Ո երջապէս ասով կնքենք խօսքերնիս՝ որ Շինաց փիլիսոփայութեան մէջ մեծ քայլափոխ մը չընելիսուն , ինչպէս նաև իրենց քաղաքականութեանը միշտ նոյն վիճակին մէջ առանց զարգանալու մնալուն պատճառը ուրիշ բանի չենք կրնար տալ , բայց եթէ իրենց դանդաղ և չճացեալ վիճակի մէջ կեցած ըլլալուն թէ գործքով և թէ մտօք . որոնց Լաոչուայի ազդու գրգիւը պէտք է՝ որով այս թմրութենէն արթըննան :